ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/39

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ
Երրոդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի
«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գասպարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցում, հակակարկտային կայանների /տեղակայումով/ ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 10.05.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար «հակակարկտային կայանների տեղակայումով» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռքբերման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն՝ թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռք բերման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրից հանել հետևյալ պահանջները՝ ««Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» և «1 տարի երաշխիք: Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին:»:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.05.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 07.05.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/7144-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 10.05.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

10.05.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/39 համարի ծածկագիրը:

13.05.2021թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Բարվա» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

13.05.2021թ.-ին, 20.05.2021թ.-ին և 04.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.06.2021թ.-ին:

2. **<u>«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 10.05.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար «հակակարկտային կայանների տեղակայումով» ձեռքբերման նպատակով 29.04.2021 թվականին հրապարակել է թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

1.2.Գնման ընթացակարգի շրջանակում ապրանքի տեխիկական բնութագրով սահմանվել է ինչպես կայանի, ղեկավարող վահանակի, հեռակառավարման ծրագրային համակարգի, այնպես էլ երաշխիքի նկարագիրը: Ապրանքի տեխիկական բնութագրում Պատվիրատուն սահմանել է հետևյալը «Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» և, որ «1 տարի երաշխիք: Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին:»: Իսկ Տեխնիկական բնութագրի ծանուցումներ բաժնի 2-րդ կետի վերջին նախադասությամբ սահմանված է, որ Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետ զ պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից

արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն՝ ի թիվս այլնի, հրավերով սահմանում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը: Օրենսդիրը կողմից սահմանված վերոհիշյալ դրույթը իր արտացոլումն է գտել թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» գնանշման հարցման հրավերում, որի 4.3. կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Սույն դեպքում թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» գնանշման հարցման հրավերում առկա ապրանքի տեխիկական բնութագրում ներառվել է նաև ապրանքի երաշխիքի նկարագիրը և սահմանվել է պահանջ, այն մասին, որ մեկ տարի երաշխիքի փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայտի հետ միասին: Վերոհիշյալ իրավական նորմերի համադրության համատեքստում պետք է փաստել, որ օրենսդիրը չի սահմանել պահանջ ապրանքի երաշխիքի փաստաթղթերը հայտի հետ միասին ներկայացնելու վերաբերյալ, ավելին գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը: Սույն դեպքում պատվիրատուն առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը ներառել է ապրանքի տեղնիկական բնութագրում, այնինչ պայմանագրի նախագծի հավելված 1-ով դրա համար նախատեսված են առանձին սյունյակներ: Արհեստական փոփոխության արդյունքում Պատվիրատուն տեխիկական բնութագրում արհեստականորեն ներառել է նաև երաշխիքի վերաբերյալ փաստաթղթեր, որի իրավասությունը չուներ և որն իր հերթին հակասում է գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետի պահանջներին: Ավելին պայմանագրի նախագծի հավելված 1-ի ծանթագրություններ բաժնի 2-րդ կետում Պատվիրատուն սահմանել է, որ Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ: Նշվածի մեկնաբանությունից ակնհայտ է, որ երաշխիքային նամակի կամ համապատասխանության

սերտիֆիկատի ներկայացման պարտականություն մասնակցի մոտ կարող է ծագել Պայմանագրով նախատեսված դեպքերում, ուստի պայմանագրի կնքմանը նախորդող գործառույթների իրականացման ժամանակ Պատվիրատուն չի պահանջել այն, ինչը ներկայացման համար ժամկետները պետք է նախատեսվեն Պայմանագրով: Սույնից պետք է փաստել, որ 1 տարի երաշխիքի վերաբերյալ փաստաթղթերը հայտի հետ միասին ներկայացնելը ապրանքի տեխնիկական բնութագրի նկարագրում նախատեսելը հակասում է հենց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին վերոհիշյալ հիմնավորումներով:

ՀՀ գնումների մասին օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 17-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. (...):

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 13-րդ կետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին: Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 31-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը-ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման առարկայի բնութագիրը՝ ի թիվս այլնի, ձեռք բերվող ծառայության ամբողջական և հստակ նկարագիրը պարունակող գնման առարկայի հատկանիշներն է, որը իր հերթին պետք է բացառի տարակերպ մեկնաբանությունները: Տեխնիկական բնութագիրը դա ապրանքի նկարագիրն է, որով այն դիտարկողին հնարավորություն է ընձեռնվում անհատականացնել այն այլ նյութական արժեքներին առանձին հատկանիշներով և տեսակով, իսկ երաշխիքը դա ոչ թե ապրանքը անհատականցնող տվյալ է, այլ այն ինքնին հանդիսանում է ապահովման միջոց ապրանքի որակի վերաբերյալ, ուստի դրա տեխնիկական բնութագրում ներառելը ինքնանպատակ է և չի վերաբերվում ապրանքի հատկանիշներին: Նշվացից զատ տեխնիկական բնութագրում երաշխիքի վերաբերյալ

փաստաթղթերի հայտի հետ ներկայացնելու պահանջը սահմանափակում է տնտեսական մրցակցությունը հետևյալ հիմնավորումներով: Գնման ընթացակարգը բաց է և դրան մասնակցելու իրավասություն ունեն այն բոլոր տնտեսվարողները, ովքեր ունեն հետքրքրություն, ապրանքի տեսակով պայմանավորված տեսականորեն հնարավոր է դրա արտադրությունը Հայաստանում, այնպես էլ ներմուծումը: Գնման ընթացակարգի մասնակցության դեպքում պարտադիր պայման չէ, այն որ մասնակիցը իր պահեստում պետք է ունենա համապատասխան ապրանք, այլ նա կարող է այն ներկրել կնքված պայմանագրի, որով պայմանավորված նոր կկարողանա ձեռք բերել նաև այդ ապրանքի երաշխիքի վերաբերյալ փաստաթղթեր: Տնտեսական մրցակցության սահմանափակումը կկայանա այն իրավիճակում, երբ տնտեսվարողին ըստ էության պահանջ կներկայացվի դեռևս ձեռք չբերված ապրանքի երաշխիքի վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, ուստի գնման ընթացակարգին կկարողնան մասնակցել միայն այն անձիք ովքեր այս պահի դրությամբ ունեն համապատասխան ապրանք, և այն ներկրողների նկատմամբ այդ պահանջի սահմանման հիմքով ձեռք կբերեն հակաօրինական առավելություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Վերոհիշյալ նորմի մեկնաբանմամբ պետք է փաստել, որ օրենսդրի կողմից սահմանված սկզբունքների ապահովումը, այն է, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսումը հնարավոր կլինի միայն այն դեպքում երբ արհեստականորեն խոչընդոտներ չեն ստեղծվի գնման ընթացակարգի շրջանակում մատակարարվող ապրանքի ներմուծող կազմակերպությունների համար և արդյունքում կունենանք իրավահավասար և ոչ խտրական հիմունքներով կազմակերպված գնման ընթացակարգ:

Սույն դեպքում ներկայացված տեխնիկական բնութագրի նկարագրում առկա երաշխիք բաժինը որևէ կերպ չի առնչվում ապրանքի հատկանիշներին, այլ միայն սահմանում է լրացուցիչ խոչընդոտներ մասնակցության ցանկություն ունեցող

տնտեսվարողների համար: Ինչ վերաբերվում է «Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» նման հավաստագրի պայմանը պարտադիր չէ արտադրող ընկերությունների համար, որի պարագայում հրավերով նման փաստաթուղթ ներկայացնելու պահանջը սահմանափակում է մրցակցությունը և ըստ էության ստիպում մասնակիցներին մատակարարման նպատակով ապրանքները ձեռք բերել կոնկրետ արտադրողներից: Ընդ որում Պատվիրատուի կողմից չի կատարվել գնման ենթակա ապրանքի արտադրող ընկերությունների ուսումնասիրություն, որի արդյունքում նոր միայն հնարավոր կլիներ փաստել, այն հանգամանքը, որ ISO 9001:2008 հավաստագրի պահանջ չի սահմանափակի մրցակցությունը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար «հակակարկտային կայանների տեղակայումով» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռքբերման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն՝ թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերով ձեռք բերման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրից հանել հետևյալ պահանջները՝ ««Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» և «1 տարի երաշխիք: Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին:»:

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն 18.05.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Նախ անդրադառնալով Պատվիրատուի 12.05.2021 թվականին ներկայացված «բողոքի պատասխան»-ին հայտնեմ հետևյալը, որ թիվ ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքը ներկայացվել է 06.05.2021 թվականին, որը վերադարձվել է 07.05.2021 թվականին և արձանագրված թերությունները շտկելու համար տրամադրվել է երկու աշխատանքային: Բողոքի ուղղված տարբերակը ներկայացվել է 07.05.2021 թվականին և այն համարվում է ներկայացված սկզբնական ներկայացման օրը, քանզի շտկումը կատարվել է սահմանված ժամկետում: Ընդ որում երկու դեպքում էլ դրանք ուղարկվել են Պատվիրատուին և Պատվիրատուն տեղեկացված է եղել բողոքի մասին:

Անդրադառնալով «բողոքի պատասխան» վերտառությամբ փաստաթղթի բովանդակային մեկնաբանություններին, ակնհայտ է, որ երկրորդ էջի 1-ին պարբերությամբ

հստակ նշել է, որ նախապես կատարել են շուկայի ուսումնասիրություն և իրենց համար պարզել, որ շուկայում առկա երկու ընկերություններ Լոկատոր ՓԲԸ և Բարվա ՍՊԸ բավարարում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին: Առնվազն տարակուսելի է նման մեջբերումը և միթե՞ Պատվիրատուն չի հասկանում, որ հենց ինքն է փաստում այն մասին, որ իր կողմից կազմված հրավերի տեխնիկական բնութագիրը մշակվել է հենց նույն երկու կազմակերպությունների համար: Բացի այդ սույն ընթացակարգի շրջանակում ոչ թե՞ շեշտադրում էր կատարվել այն հանգամանքին, որ Պատվիրատուի կողմից նման վիճարկվող պահանջների սահմանումը իրավաչափ չէ, այլ այն որ նման պայմանի սահմանելը չի խրախուսում մրցակցությունը և հնարավորություն չի ընձեռնում բողոքաբերին մասնակցելու տվյալ ընթացակարգին, ուստի դրանով պայմանավորված Պատվիրատուն պետք է ներկայացնի համապատասխան մասնագիտական հիմնավորումներ վիճարկվող պայմանների պարտադիր լինելու վերաբերյալ, իսկ հակառակ դեպքում դրանք ենթակա կլինեն փոփոխման, նաև այն փաստական հանգամանքների լույսի ներքո, որ հենց հրավերին կից պայմանագրի նախագծով դրանց կարելի է անդրադառնալ պայմանագրի կատարման փուլում, իսկ սույն դեպքում Պատվիրատուն ոչ թե մասնագիտորեն է հիմնավորել վիճարկվող պայմանների պարտադիրության հարցը, այլ վերացական մեկնաբանություններով նշել, որ բյուջետային միջոցներն են սուղ, առկա է գնման հայտի խիստ անհրաժեշտություն ազգաբնակչության կարիքները անվտանգ հոգալու և այլ պայմաններ ապահովելու համար: Հատկանշական է նաև այն, որ ֆինանսական միջոցների սղության դեպքում Պատվիրատուն պետք է խթանի մրցակցությունը, այլ ոչ թե լրացուցիչ չհիմնավորված պայմաններով նվազեցնի մասնակիցների թիվը, որպեսզի հնարավոր լինի ստանալ առավել ցածր գնային առաջարկ: Սույն դեպքում Պատվիրատուի իրական նպատակը իր իսկ քայլերի համապատասխան չէ, քանզի և նշվածը իր հերթին հաստատվում է Պատվիրատուի գործողություններով պայմանավորված, քանզի Պատվիրատուն տեղեկացված լինելով բողոքի մասին, հապճեպ ձեռնամուխ է եղել Պայմանագրի կնքմանը ուղղված գործողություններ կատարելուն և որ հատկանշական է 06.05.2021 թվականի թիվ 2 արձանագրությամբ նշել, որ հայտերի բացման և գնահատման նիստից հետո ոչ ուշ հաջորդ աշխատանքային օրը հրապարկման է ենթակա նաև պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը և արդյունքում այն չհրապարակեց իր իսկ նշած ժամկետում, այլ միայն հրապարակեց 11.05.2021 թվականին: Եթե այդքան շտապ էր և անգործության ժամկետ չէր սահմանվելու ինչու մայիսի 7-ին չհրապարակեցիք ու այնուհետ չկնքեցիք պայմանագիր, այլ հրապարակեցիք միայն բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելուց հետո: Նշվածը նույնպես ապացուցում է

այն հանգամանքը, որ Պատվիրատուի վարքագիծը ուղղված է եղել կոնկրետ մասնակիցների հետ պայմանագիր կնքելուն և ամեն կերպ փորձ է կատարել խուսափել տեխնիկական բնութագրի փոփոխության միջոցով այլ մասնակիցների ներգրավումից, իսկ եթե՞ այդպես չէ, ապա ինչու՞ քաջատեղյակ լինելով բողոքի մասին չի սպասում դրա վերաբերյալ որոշմանը, որից հետո նոր շարունակում անհրաժեշտ գործողությունները:

Պայմանավորված վերոգրյալով և այն հանգամանքով, որ բողոքի բավարարման դեպքում «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման հրավերը ենթակա կլինի փոփոխության, ուստի 06.05.2021 թվականի թիվ 2 արձանագրությունը ենթակա կլինի չեղարկման:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին բողոքի լրացմամբ խնդրել է ի լրումն հիմնական պահանջի, որպես հետևանք պարտավորեցնել թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղարկելու նույն ընթացակարգի 06.05.2021 թվականի թիվ 2 արձանագրությունը:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 10.05.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7276-2021 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 10.05.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 12.05.2020թ.-ին թիվ 348 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի /այսուհետ Բողոքաբեր/ կողմից ներկայացվել է ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոք:

Բողոքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Բողոքաբերը վիճարկում է հրավերի տեխնիկական բնութագրի որոշ կետեր, որի վերաբերյալ հայտնում ենք մեր դիրքորոշումը:

Նախ՝ հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի՝

Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացնում է հրավերով նախատեսված անգործության ժամանակահատվածում(հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետ).

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

Հաշվի առնելով, որ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. մայիսի 6-ի ժամը՝ 14:00, իսկ բողոքը հրապարակվել է տեղեկագրում միայն 2021թ. մայիսի 10-ին ժամը 12:27-ին, ինչպես նաև բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթում առկա է էլեկտրոնային ստորագրություն թվագրված 2021 թվականի մայիսի 7-ով, համարում ենք, որ բողոքարկման սահմանված ժամկետը նման դեպքերի համար այսպիսով բաց է թողնված: Մրցույթը սահմանված կարգով տեղեկագրում հրապարակվել է 2021թ. ապրիլի 29-ին, ժամը 16:13-ին և Բողոքաբերը ունեցել է բավարար ժամանակ հրավերին ծանոթանալու, հարկ եղած դեպքում սահմանված ժամկետում պարզաբանումների պահանջ ներկայացնելու և վերջապես բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը սահմանված ժամկետում:

Այժմ ըստ էության անդրադառնանք բողոքում նշված տեխնիկական բնութագրի կետերին:

Հաշվի առնելով համայնքի բյուջետային միջոցների սղությունը և հակակարկտային կայանների գնման խիստ անհրաժեշտությունը, ցանկանում ենք գնել որակյալ, մարդկային կյանքի և համայնքի համար անվտանգ, հուսալի և հետագա շահագործման տեսակետից հարմար կայաններ, ինչը կարծում ենք, օբյեկտիվորեն հիմնավորված է: Մենք հրավերով նշել ենք այնպիսի պահանջներ, ինչը պետք է և անհրաժեշտ է համայնքին և ինչը մենք գտնում ենք նպատակահարմար մեր ազգաբնակչության կարիքների համար, միևնույն ժամանակ խստորեն պահպանելով գնումների մասին օրենքի բոլոր կետերը: Մենք չենք նշել որևէ ֆիրմային անվանում կամ կոնկրետ արտադրողի տվյալներ, ավելին ըստ կիրառվող հրավերի ձևանմուշների հրավերում առկա է եղել հետևյալ համապատասխան նշումը.

** Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը:*

Մեր կողմից, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի, գնման առարկայի տեխնիկական բնութագրերը սահմանելիս, իրականացվել է բազմակողմանի

ուսումնասիրություն, ինչպես նաև նախորդ տարիների հանրապետության տարբեր մարզերում հայտարարված նմանատիպ մրցույթների տեխնիկական բնութագրերի վերլուծություն, ելնելով վերը նշված կարգի 22-րդ կետի այն դրույթից, որ բնութագրերին պետք է բավարարեն մեկից ավելի մասնակիցներ և արտադրողներ: Այս վերլուծությունից և ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շուկայում գործող թվով երկու արտադրողներ/Լոկատոր ՓԲԸ և Բարվա ՍՊԸ/, ամբողջությամբ բավարարում են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես Բողոքաբերի կողմից մատնանշված ISO 9001 սերտիֆիկատի առկայության պահանջին/հիմք՝ նշված ընկերությունների կայքեր/:

Ինչ վերաբերում է 1 տարվա երաշխիքի սահմանմանը, ապա դա պարտադիր պայման է հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում/հակակարկտային կայանները համայնքի գույքային հաշվեկշռում թե նախկինում թե այս գնումից հետո հաշվառվում են որպես հիմնական միջոց/ և ֆիքսված է նաև հրավերի պայմանագրի նախագծում/հավելված 6, 4.2 կետ/ համապատասխան նշումով:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից:

Ուստի այս մասով բողոքաբերի մեջբերումները և դատողությունները ընդհանրապես վերաբերելի չեն 1 տարվա երաշխիքային սպասարկման պահանջի հետ:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ մեր կողմից որևիցէ արհեստական արգելք չի ստեղծվել գնման գործընթացին որևէ հնարավոր մասնակցի մասնակցության համար և ամենը օբյեկտիվորեն հիմնավորված է գնման առարկայի առանձնահատկություններով և համայնքի կարիքների համար նպատակային և արդյունավետ գնում կատարելու հիմքով: Ուստի խնդրում ենք ներկայացված բողոքը մերժել և թույլ տալ ավարտին հասցնել գնման ընթացակարգը:»:

<u>4. Երրորդ անձ՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Բարվա» ՍՊԸ-ն 13.05.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Երրորդ անձը 25.05.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1. ՀՀ Շիրակի մ., Ախուրյանի համայնքի գնահատող հանձնաժողովը /այսուհետ նաև՝ հանձնաժողով/ 29.04.2021 թվականին հրապարակել է հրավեր և հայտարարություն՝ ծածկագիր ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով /այսուհետ նաև՝ հրավեր/:

2. Հրավերով սահմանվել է տեխնիկական բնութագրի հետևյալ բովանդակությամբ. «1.15 Այլ պահանջներ

- Պետք է իրականացվի կայանի հողանցում:

*- Հակակարկտային կայանը պետք է ունենա թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն:***

*- Հակակարկտային կայանը պետք է ունենա ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:***

*- Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր:***

1 տարի երաշխիք:

** Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը:*

*** Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին:»:*

3. Մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել <<Բարվա>> ՍՊԸ-ն և հայտերը բացվելուց հետո ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Համաձայն ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի պաշտոնական կայքի <<Բիզնես էլիտա>> ՍՊԸ-ն չունի տեխնիկական պայմաններ հրավերով սահմանված:

Գտնում ենք, որ բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն.

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն.

«2. Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).»:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 21.-րդ կետի համաձայն. «Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում»:

Կարգի 22-րդ կետի համաձայն. «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի»:

Տվյալ դեպքում հանձնաժողովը կիրառել է Կարգի 22-րդ կետը, նկատի ունենալով, որ ներկայացված պայմաններով ապրանքի համար առկա են հնարավոր առնվազն երկու մասնակից, հետևաբար առարկայազուրկ է բողոքաբերի հիմնավորումները, որ միայն մեկ

արտադրողի համար է նախատեսված: Այսինքն՝ Պատիրատուի պահանջը ամբողջությամբ իրավաչափ է:

Ավելին՝ <<Բարվա>> ՍՊԸ-ն հանդիսանում է ռեզիդենտ ընկերություն, ներդրում է կատարել ՀՀ-ում և արտադրանքը ՀՀ-ում է արտադրվում ի տարբերություն <<Բիզնես Էլիտա>> ՍՊԸ-ի, որն ի տարբերություն, իր հայտնած տեղեկություններով ակնկալում է ներմուծել ապրանքը;

Երաշխիքի մասով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 368-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «1. Պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել գրավով (գլուխ 15), տուժանքով, պարտապանի գույքի պահումով, երաշխավորությամբ, երաշխիքով, նախավճարով և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ եղանակներով»:

Տվյալ դեպքում երաշխիքի պահանջը չի կարող մեկնաբանվել այլ կերպ, քանի որ այն հանդիսանում է հիմնական պարտավորության ապահովման միջոց, իսկ հիմնական պարտավորության գոյության բացակայության դեպքում չի կարող լինել երաշխիք, այսինքն՝ երաշխիքի պահանջը վերաբերում է պայմանագրով սահմանված պարտավորության ծագումից հետո գոյություն ունեցող իրավահարաբերությանը:

Մասնակցի պահանջներին ակնհայտ անբավարար լինելու մասով:

<<Բիզնես Էլիտա>> ՍՊԸ-ն չունի հայտով ներկայացված փաստթղթերը՝ թռչող օբյեկտների վրա ներազդման անվտանգության վերաբերյալ եզրակացություն, ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմաններ:

Համաձայն ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի պաշտոնական կայքի <<Բիզնես Էլիտա>> ՍՊԸ-ն չունի տեխնիկական պայմաններ, «տոռ» բառի որոնման արդյունքում անգամ որպես արտադրող նշվում է այլ ընկերություն «տոռեռո սվիթ» ՍՊԸ, այսինքն՝ հրավերով սահմանվածը բացակայում է:

Կարգի 67-րդ կետի համաձայն. «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Նշված նորմի կիրառման նպատակով Պատվիարտուն տվյալ դեպքում իրավունք ունի, ավելին՝ պարտավոր է ստուգել վերը նշված տվյալների իսկությունը, քանի որ մենք՝ որպես մասնակից ներկայացնում ենք անհամապատասխանության մասին ակնհայտ տվյալներ:

Նշվածի հիման վրա խնդրում եմ բողոքը մերժել ամբողջությամբ:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2021/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների /տեղակայումով/ ձեռքբերման նպատակով 29.04.2021թ.-ին հայտարարվել է «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.05.2021թ.-ին:

iii. Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«…Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր,

1 տարի երաշխիք,

Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը,

Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին…»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.05.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացվել է հայտերի բացման և գնահատման նիստը:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 10.05.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի

«ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Իսկ եթե գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապա գտնում ենք, որ դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Պատվիրատուն հրավերով սահմանում է պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.20-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.20) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ

պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հակակարկտային կայանների /տեղակայումով/ ձեռքբերման նպատակով 29.04.2021թ.-ին հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

«…Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր,

1 տարի երաշխիք,

Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը,

Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին…»:

Վերոնշյալ իրավական և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց՝ գործով հաստատված փաստերի հետ համադրմամբ, համալիր վերլուծությամբ և գնահատմամբ՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ *«…Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին…»* պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ մասնակիցը, հրավերով սահմանված դեպքում, հայտով՝ թիվ 1.1 հավելվածով ներկայացնում է միայն իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը, իսկ այլ փաստաթղթեր, մասնավորապես՝ ISO 9001:2008 հավաստագրի և 1 տարի երաշխիքի ներկայացման պարտականություն Մասնակիցը հայտով՝ թիվ 1.1 հավելվածով չի կրում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը այս մասով հիմնավոր է, իսկ գնման ընթացակարգի հրավերի *«…Սույն փաստաթղթերը ներկայացվում են հայտի հետ միասին…»* պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջներին՝ որպիսի պայմաններում խախտվում են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Նման պայմաններում Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների խախտման առկայության պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից 06.05.2021թ.-ին թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները պետք է դադարեցվեն՝ որպես սույն որոշմամբ արձանագրված խախտման հետևանք:

Միևնույն ժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովը, Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու համար կարող է կիրառել Կարգի 67-րդ և Հրավերի 8.20-րդ կետերով սահմանված դրույթները՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալները, հրավերով սահմանված՝ «փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայտի հետ միասին» պահանջի փոխարեն:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով նշված գնման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված *««Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» և «1 տարի երաշխիք: Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը»* հանելու մասին պահանջին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանություններով.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական

հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման/հերքման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի

առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը, բացառությամբ՝ սույն որոշմամբ արձանագրված «փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայտի հետ միասին» պահանջը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման առումով, անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված *««Արտադրող ընկերությունը պետք է ունենա ISO 9001:2008 հավաստագիր» և «1 տարի երաշխիք: Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը»*-ի մասով ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի կողմից 10.05.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/39 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար «հակակարկտային կայանների տեղակայումով» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**